

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության
«Ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի
շրջանակներում 2018թ. առաջին եռամսյակում (01.01.2018թ.-31.03.2018թ.)
կատարված աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Անտենային էտալոնների պահպանումը և զարգացումը» ծրագրի համաձայն՝
ԳԷՊԻ-1, ԳԷՊԻ-2 էտալոնների չափման ճշտությունները պահպանելու և բարձրացնելու
համար անհրաժեշտ է պարբերաբար կատարելագործել սարքավորումները՝ հաշվի
առնելով ալեհավաքների պարամետրերի չափման զգայնությունների բարձրացման
արդի աճող պահանջները:

Կազմվել է օրացույցային պլան՝ տարեկան աշխատանքների համար, կատարվել
են ԳԷՊԻ-1, ԳԷՊԻ-2 էտալոնային համալիրների աշխատանքային վիճակների
ստուգումներ, որոնց հիման վրա կազմվել է անհրաժեշտ վերանորոգման
աշխատանքների ցանկ:

Ստուգվել է առաջնային և երկրորդային անտենաների տեխնիկական վիճակը,
վերականգնվել են անտենաների օպտիկական կարգաբերման համակարգերը:

Ընտրվել է ԳԷՊԻ-2 անտենային կոմպլեքսի էտալոն-վկայի պաշտպանական
ծածկի շարժողական համակարգի աշխատունակությունն ապահովելու և անհրաժեշտ
վերականգնողական աշխատանքների համար ձեռքբերման ենթակա անհրաժեշտ
սարքավորումների ցանկը:

Ելքում մշակվել է ավելի փոքր աղմուկներով նոր նախաուժեղարարի սխեմա, որի
օգտագործումը հնարավորություն կտա մեծացնել ԳԷՊԻ-1 անտենային կոմպլեքսով
կատարվող չափումների դինամիկ դիապազոնը:

Ուսումնասիրվել և սկսվել են 0,4-0,75մ տրամագծով ալեհավաքների չափման
համար 0,25մ բացվածքով ռուպորային անտենայի վերականգնման և նրա ավելի պարզ
կարգաբերման համակարգի ստեղծման համար անհրաժեշտ նախագծման
աշխատանքները:

«Մթնոլորտի և ջերմային ճառագայթման աղբյուրների ֆիզիկական բնութագրերի չափումների չափագիտական ապահովման մեթոդների ուսումնասիրություն և մշակում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է ինֆրակարմիր ճառագայթման աղբյուրներից մթնոլորտ արտանետվող տաք գազային զանգվածների, ինչպես նաև՝ տարբեր տարածքներում և ծավալներում աերոզոլային մասնիկների ֆիզիկա-էկոլոգիական պարամետրերի օպտիկա-էլեկտրոնային չափումների չափագիտական ապահովության մեթոդների ուսումնասիրում և մշակում:

Մթնոլորտի բնապահպանական պարամետրերի տեսական հետազոտությունների բնագավառում իրականացվել են շրջակա միջավայրում աերոզոլային մասնիկների խտությունների և չափսերի չափման համար նախագծված «Մասնիկ-Ա» աերոզոլային սպեկտրաչափի չափագիտական ատեստավորման մեթոդիկայի և ծրագրի մշակման աշխատանքները:

Հետազոտությունների արդյունքներն ուղարկվել են՝ «Colloquium - journal» լեհական գիտական ամսագրում տպագրության համար: